PRINTASHA

The Card Pack

Words for the card, in Armenian.
For tatiks, papiks, moms, dads, and everyone
you never know what to write to.

20 CARDS · ARMENIAN · TRANSLITERATION · ENGLISH

How to use it: find the person, copy the words into your card, in Armenian script or in letters, both are here. The gift is easy. The card was the hard part.

Մամ, շնորհակալ եմ, որ ամեն օր զանգում ես հարցնելու՝ կերե՞լ եմ: Կերել եմ: Հիմա կարող ես հանգստանալ: (Գիտեմ, չես հանգստանալու: Բայց ասածս ուժի մեջ է:) Սիրում եմ քեզ շատ:

Mam, shnorhakal em, vor amen or zangum es hartsnelu, kerel em? Kerel em. Hima karogh es hangstanal. (Gitem, ches hangstanalu. Bayts asatss uzhi mej e.) Sirum em qez shat.

Mom, thank you for calling every day to ask if I ate. I ate. You may rest now. (You will not rest. But the offer stands.) I love you very much.

Երեխաները մեր ուրախությունն են, իսկ տղամարդիկ՝ մեր թուլությունը: Մի անգամ թուլացար… ուրախանում ես ամբողջ կյանքում: Թող ուրախությունները անպակաս լինեն քո կյանքում, և թող այդ միակ թուլությունդ քեզ միայն ուժ տա:

Erekhanery mer urakhutyunn en, isk tghamardik mer tulutyuny. Mi angam tulatsar, urakhanum es amboghj kyanqum. Tox uraxutyunnery anpakas linen qo kyanqum, yev tox ayd miak tulutyund qez miayn uzh ta.

Children are our joy, and men are our weakness. Weaken once, and you rejoice for the rest of your life. May the joys never run short in your life, and may that one weakness only ever give you strength.

Պապ, դու օրը հինգ բառ ես ասում, ու հինգն էլ ճիշտ են: Այս մայկան վեցերորդն է:

Pap, du ory hing bar es asum, u hingn el chisht en. Ays maykan vetserordn e.

Dad, you say five words a day and all five are right. This shirt is number six. Happy Father's Day.

Տատ ջան, ծնունդդ շնորհավոր: Ես նիհար չեմ, սոված չեմ, ու այս ընտանիքի ամեն ջերմ բան սկսվում է քո խոհանոցից ու քո ձեռքերից: Երկար մնա մեզ հետ:

Tat jan, tsnundd shnorhavor. Yes nihar chem, sovats chem, u ays yntaniqi amen jerm ban sksvum e qo khokhanotsits u qo dzerqerits. Yerkar mna mez het.

Tatik jan, happy birthday. I am not thin, I am not hungry, and everything warm in this family starts in your kitchen and in your hands. Stay with us for long.

Պապ ջան, միակ մարդը, որ երկու րոպեանոց ճանապարհի մասին քսան րոպե պատմություն է պատմում: Մենք պատրաստ ենք լսել ևս քսանը: Ծնունդդ շնորհավոր:

Pap jan, miak mardy, vor erku ropeanots chanaparhi masin qsan rope patmutyun e patmum. Menq patrast enq lsel evs qsany. Tsnundd shnorhavor.

Papik jan, to the only man who can tell a twenty minute story about a two minute drive. We would listen to twenty more. Happy birthday.

Ասում են՝ ամեն հաջողակ տղամարդու հետևում կին է կանգնած: Մեր տանը նա հետևում չէ, նա առջևում է՝ քարտեզը ձեռքին: Շարունակիր առաջնորդել: Ես ուրախությամբ կհետևեմ:

Asum en, amen hajoghak tghamardu hetevum kin e kangnats. Mer tanu na hetevum che, na arjevum e, qartezy dzerqin. Sharunakir arajnordel. Yes urakhutyamb khetevem.

They say behind every successful man stands a woman. In our house she is not behind, she is in front, holding the map. Keep leading. I will follow, happily.

Ասում են՝ լավ ամուսին դժվար է գտնել: Ես իմը գտել եմ ու հետ չեմ տալիս, անդորրագիրը կորել է: Շնորհավոր ծնունդդ, իմ գտնված գանձ:

Asum en, lav amusin djvar e gtnel. Yes imy gtel em u het chem talis, andorragiry korel e. Shnorhavor tsnundd, im gtnvats gandz.

They say a good husband is hard to find. I found mine and I am not giving him back, the receipt is lost. Happy birthday, my found treasure.

Քույրը միակ ընկերն է, ում չես ընտրում:
Բայց եթե ընտրեիր, նույնին կընտրեիր:
Շնորհավոր ծնունդդ, իմ առաջին ընկեր:

Quyry miak ynkern e, um ches yntrum. Bayts ete yntreir, nuynin kyntreir. Shnorhavor tsnundd, im arajin ynker.

A sister is the one friend you do not choose. But if you could choose, you would choose the same one. Happy birthday, my first friend.

Եղբայրը միակ մարդն է, որ գիտի մանկությանդ բոլոր գաղտնիքները, ու միևնույն է՝ շարունակում է միշտ կողքիդ լինել: Շնորհավոր ծնունդդ:

Yeghbayry miak mardn e, vor giti mankutyand bolor gaghtniqnery, u mievnuyn e, sharunakum e misht koghqid linel. Shnorhavor tsnundd.

A brother is the only person who knows all your childhood secrets, and all the same, he keeps always being by your side. Happy birthday.

Աղջիկը հոր հպարտությունն է ու մոր արձագանքը: Թող քո ձայնը կյանքում հնչի նույնքան վստահ, որքան մեր տանը: Շնորհավոր ծնունդդ:

Aghjiky hor hpartutyunn e u mor ardzaganqy. Tox qo dzayny kyanqum hnchi nuynqan vstah, vorqan mer tanu. Shnorhavor tsnundd.

A daughter is her father's pride and her mother's echo. May your voice sound in life as confident as it sounds in our house. Happy birthday.

Ասում են՝ հարսանիքը մեկ օր է, ամուսնությունը՝ մի ամբողջ պատմություն: Թող ձեր պատմությունը լինի այն մեկը, որ ամբողջ ընտանիքն է պատմելու ամեն սեղանի շուրջ: Շնորհավորանք:

Asum en, harsaniqy mek or e, amusnutyuny mi amboghj patmutyun. Tox dzer patmutyuny lini ayn meky, vor amboghj yntaniqn e patmelu amen seghani shurj. Shnorhavoranq.

They say a wedding is one day, but a marriage is a whole story. May your story be the one the whole family retells at every table. Congratulations.

Սերը լույս է, իսկ ամուսնությունը՝ լույսի վարձը… Այդ վարձը մենք վճարում ենք միասին, ու դա իմ ամենասիրած ծախսն է: Շնորհավոր մեր տարեդարձը:

Sery luys e, isk amusnutyuny luysi vardzy. Ayd vardzy menq vcharum enq miasin, u da im amenasirats tsakhsn e. Shnorhavor mer taredardsy.

Love is the light, and marriage is the electricity bill. We pay that bill together, and it is my favorite expense. Happy anniversary.

Ամուսնացա, նոր հասկացա երջանկությունը որն էր, բայց արդեն ուշ էր: Բայց եթե նորից ընտրեի, նորից նույն «ուշը» կընտրեի: Շնորհավոր մեր տարեդարձը:

Amusnatsa, nor haskatsa yerjankutyuny vorn er, bayts arden ush er. Bayts ete norits yntrei, norits nuyn "ushy" kyntrei. Shnorhavor mer taredardsy.

I got married, and only then I understood what happiness was, but it was already too late. But if I had to choose again, I would choose the same "too late" again. Happy anniversary.

Բարի գալուստ ընտանիք: Երկու կանոն կա՝ տատիկը միշտ ճիշտ է, և դու երբեք, երբեք սոված չես մնալու:

Bari galust yntaniq. Erku kanon ka, tatiky misht chisht e, yev du yerbeq, yerbeq sovats ches mnalu.

Welcome to the family. Two rules: tatik is always right, and you will never, ever be hungry. Happy life, little one.

Հոռետեսը նա է, ով խաչբառը լուծում է մատիտով, իսկ լավատեսը՝ գրիչով: Միշտ մնա լավատես, ինչպես որ կաս:

Horetesy na e, ov khachbary lutsum e matitov, isk lavatesy grichov. Misht mna lavates, inchpes vor kas.

A pessimist is someone who solves the crossword in pencil, an optimist solves it in pen. Always stay an optimist, exactly as you are.

Միայնակությունն այն է, երբ դու հաստատ գիտես, թե ով է կեղտոտել խոհանոցը: Թող քո խոհանոցում միշտ այնքան մարդ լինի, որ մաքրելու հերթը քեզ երբեք չհասնի:

Miaynakutyunn ayn e, yerb du hastat gites, te ov e keghtotel khokhanotsy. Tox qo khokhanotsum misht aynqan mard lini, vor maqrelu herty qez yerbeq chhasni.

Loneliness is when you know for certain who made the kitchen dirty. May your kitchen always be so full of people that the cleaning turn never reaches you.

Հոռետեսն իր առջև տեսնում է մութ թունել: Լավատեսը տեսնում է մութ թունել՝ վերջում լույս: Ռեալիստը տեսնում է և մութ թունելը, և լույսը, և մոտեցող գնացքը: Իսկ մեքենավարը տեսնում է գծերի վրա նստած երեք տխմարների: Դու չորսից ոչ մեկն ես: Դու նա ես, ով դուրս է գալիս մյուս կողմից:

Horetesn ir arjev tesnum e mut tunel. Lavatesy tesnum e mut tunel, verjum luys. Realisty tesnum e yev mut tunely, yev luysy, yev motechogh gnatsqy. Isk meqenavary tesnum e gtseri vra nsstats yereq tkhamarneri. Du chorsits voch mekn es. Du na es, ov durs e galis myus koghmits.

The pessimist sees a dark tunnel. The optimist sees a dark tunnel with light at the end. The realist sees the tunnel, the light, and the train coming. And the driver sees three fools sitting on the tracks. You are none of the four. You are the one who comes out the other side.

Հայ հիվանդը երկու բժիշկ ունի՝ իսկականը և տատիկը՝ իր ապուրով: Երկուսն էլ արդեն զբաղվում են քո գործով: Շուտ առողջացիր: Ապուրը արդեն ճանապարհին է:

Hay hivandy erku bjishk uni, iskakany yev tatiky ir apurov. Erkusn el arden zbaghvum en qo gortsov. Shut aroghjatsir. Apury arden chanaparhin e.

An Armenian patient has two doctors, the real one and tatik with her soup. Both are already working on your case. Get well soon. The soup is on its way.

Դիպլոմը թուղթ է: Այն, ինչ արեցիր այն ստանալու համար, ոսկի է: Հպարտ ենք քեզնով: Սա միայն սկիզբն է:

Diplomy tukht e. Ayn, inch aretsir ayn stanalu hamar, voski e. Hpart enq qeznov. Sa miayn skizbn e.

A diploma is paper. What you did to earn it is gold. We are proud of you. This is only the beginning.

Սուրբ Ծննդին տունը չափվում է ոչ թե մեծությամբ, այլ նրանով, թե քանի սերունդ է տեղավորվում մեկ սեղանի շուրջ: Թող ձեր սեղանը միշտ նեղ լինի մարդկանցից: Շնորհավոր Սուրբ Ծնունդ:

Surb Tsndin tuny chapvum e voch te metsutyamb, ayl nranov, te qani serund e tegavorvum mek seghani shurj. Tox dzer seghany misht negh lini mardkantsits. Shnorhavor Surb Tsund.

At Christmas a house is measured not by its size, but by how many generations fit at one table. May your table always be crowded with people. Merry Christmas.

Made for Armenians, by Armenians.

New cards join the pack in our monthly email,
along with early access to new designs and gift reminders.

printasha.com